

## **ԲԱՆԵԱՍԻՐԱԿԱՆ**

### **Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆԻ ՊԱՏԱՍԻԱՆԻՆ ՊԱՏԱՍԻԱՆ**

Մի ինքնատիպ արգոյ բանասերը դժգոհ է մնացել մեր քննական նկատողություններից որ արել էինք իր մի անյաջող ուսումնասիրությունն առթիւ։ Իր սրտմտութեան թե և տուել մի նոր գրություններ։ Յաւալի է որ փոխանակ խոստովանելու զործած սխալը, ծանրացնում է իր պատասխանատուութիւնը նորանոր սխալներով և թիւր գատողութիւններով։ Դժգոհանք է նաեւ իր յոխորտ լեզուն, որ խորթ է բանասիրական խաղաղաւէտ որոնումներին և ոչինչ է և աւելացնում ո՛չ իր գիտութեան և ո՛չ մեր անգիտութեան։ Մնանք վայելչութեան սահմաններում, հաւատարիմ մեր ճաշակին և հեռու այն ամենից ինչ որ յարում է կոկոզաբանութեան։ Քննենք նրա «Հերքումները», քննենք նիւթին պատկան անգործութեամբ։

Հ. Ն. Ակինեան հրատարակել է (Հ. Ա. 11-12, 1937) մատենագրական մի նըշխար՝ «Նկարագիր կարգաց ի բանից Եզնեկան» վերնագրի տակ։ Յօդուածն սկսւում է հետեւեալ աներկղիմ յայտարարութեամբ. «Այս խորագրի տակ հասած է մեզի զըրւածք մը Պարսիսի Ազգ. Մատ. թ. 112 ձեռագրին մէջն։ Արդ մեզ ծանօթ էր որ գրութեան վերնագիրն է՝ «Նշանագիր կարգաց բանից Եզնեկան»։ Տարբերութիւնն ակնհեր է։ Հրատարակիչն յիշել էր որ Բա-հիյ-ի վրայ աւելացրել է ի նախորդը, բայց որ նշանագիրը զարծրել է Գլխագիր, այս մասին ո՛չ մի ակնարկ։

Բնական էր կարծիքը որ անախորժ վերլուծական է, աչքի պատահական սայթաքում։ Այժմ Հ. Ակինեան յայտնում է որ բնական վերլուծական է, այլ մի սրբագրութիւն, միայն թէ մոռացել է յիշատակել և հարկ եղած բացատրութիւնը տալ։

Մեզ թւում է որ վերլուծական չէ և աւելի ներքին կը լինէր քան նման սրբագրութիւն, որ կատարեալ յանցանք է մէկէն աւելի նկատումով։ Նախ պէտք է խաթարել ձեռագիրը, յետոյ՝ պէտք է մո-

ռանալ խաթարումը և վերլուծական պէտք է տեղիք տալ այսօրինակ փորձանքի, մեղանչիւմ բանասիրական հրատարակութեան տարրական սկզբունքի դէմ՝ վերադարձնել ձեռագիրը հարապատօրէն, իսկ սրբագրութիւնները, ինչ և լինին նրանց բնաւորութիւնն ու արժէքը, վերապահել ուսումնասիրութեան մէջ յիշելու։ Այս կերպով ձեռագրերը կը մնար անհղծ և սրբագրութիւնը կը բռնէր իր պատշաճ տեղը առանց աւելորդ վէճերի առիթ տալու։ Պարզ ճշմարտութիւն։

Գանի որ խօսքը վերլուծական մասին է, յիշենք որ նման գանցառութիւն թոյլ է տուել իրեն Հ. Ա. նաեւ իր Պատասխան-յօդուածում։ Մինք գրել էինք որ նշանագիրը պատկանում է Եզնեկ երէցին որի առնունք նշանակուած է գրութեան սկզբում և վերջում և որ հեղինակը եօթներորդ դարու մարդ է, ակնաստեւ 618 թուին կատարուած մի իրողութեան։

Այս առթիւ Հ. Ա. առարկում է որ Եզնեկի յիշատակարանը զետեղուած է երբորդ մասի վերջը, այն է կաթողիկոսների ցանկից յետոյ, և որովհետեւ ցանկը հասցրած է մինչև 790 թուականը, ապա ուսումնասիրելը ապրում էր այս թուից յետոյ և ո՛չ եօթներորդ դարում։

Հ. Ա. սխալում է, զոհ իր անուշագրութեան։ Յիշատակարանը գտնուած է երկրորդ մասի վերջը և ո՛չ թէ երրորդ, ուստի և իր գատողութիւնը միանգամայն անտեղի է։ Այս ևս մենք համարում ենք մի տեսակ վրկուղ, որպէսզի չասենք զըրպարութիւն, ի՞նչ այստեղ ևս մասն ունի իր գիտակցութիւնը։

Այժմ դառնանք բուն նիւթին։

Մեր տեսակէտը պարզ է։ Մեր հակառակորդի խորխոր «հերքումները» կարգաւորուց յետոյ ևս մնում ենք հաստատուն։ Նշանագիրը պատկանում է Եզնեկ երէցի գրչին, որ ժամանակակից է Կոմիտաս կաթողիկոսին։

Այլ կերպ է մտածում Հ. Ա., նստած մի շարք ենթադրութիւնների աւազի վերայ. նա բաժանում է գրութեանը երկու երկու մասի, ապա՝ առաջին մասը ճեղքում երկու կտորի, բոլորը մի կողմ է նետում և թողնում միայն առաջին կտորը որպէսզի Եզնեկ երէցի մէջ տեսնէ Եզնեկ Կողբացին։ Այս բաւական է, մի քանի սըր-

բազմաթիւններ է անոււմ նոյն նպատակով: Եւսեմակոբը փոխոււմ է Եկարագրի, կարգաց բաճիք՝ շինոււմ է կարգաց ի բաճիք: Այս վերջին սրբազրուածին անոււմ է օրմանաւ լու համար, բացատրոււմ է մեղ, թէ նկա-  
րագիր կարգացը՝ զրաւմ է Եզնիկ երէց, լու եւս՝ քաղոււմ հանոււմ է Եզնիկ երի-  
ցու մէկ զրոււմ քէնն:

Ի՞նչ է նշանակոււմ այս սլու եւսոր, արդեօք ընդունիլ հաստատապէս որ զըր-  
ւաւքը Եզնիկի գործը չէ, այլ քաղոււմ ք  
նրա մի գործիք՝ թէ տակաւին հնարաւորու-  
թիւն է մնոււմ Եզնիկի բուն գործ համա-  
րելու ի դէպ հարկի, ի թէ քաղոււմ ք է,  
վերնագրիք ի՞նչ է պատկանոււմ Եզնիկին  
և ի՞նչ քաղոււմ քի անյայտ հեղինակին:  
Ամէն պարագային անկարագիր կարգաց ի  
բանիք Եզնիկան կարգաւու գէպընում, ղեւ-  
կարագիր կարգացը՝ չէ կարող պատկանիլ  
Եզնիկին, այլ քաղոււմ անողին: Ապա ու-  
րեմ ինչո՞ւ է այն ճիգը ցոյց տալու որ  
անկարագիր կարգացը՝ զատական արտայա-  
տութիւն է: Արդեօք քաղոււմ անող ան-  
ծանօթը եւս զատական շըլանի անմ է:  
Շփոթ է խառնակ է Հ. Ա. միտքը:

Նշանագրի այն մասը որ Հ. Ա. Եզ-  
նիկ կողբացոյն է ուզոււմ վերագրել այլ  
բան չէ քան քաղոււմ Փաւստոսիք և Ղա-  
զարիք: Հ. Ա. կարծիքով, նախ Եզնիկ  
կողբացին է քաղիւ և կազմել և ապա նրա  
քաղոււմ քից մի երկրորդ ձեւը, մի ան-  
ծանօթ, նոր քաղոււմ ք է արել: Ուրեմն  
կողբացու քաղոււմ քն էր Բեանք Եզնիկան,  
իսկ անծանօթինը՝ Եկարագրի կարգաց ի  
բանիք Եզնիկան: Վերնագրի մնացեալ մասը՝  
«թէ ուստի էին կամ որպէս վարդօ և այլն»,  
մեւ է պատկանոււմ, կողբացուն թէ անծա-  
նօթին, մնոււմ է անորոշ: Հ. Ա. փոյթը չէ,  
պէտք չէ տեսնոււմ կշռելու սլու և առի հետե-  
ւանքները և շարունակոււմ է գրոււմ քի վեր-  
նագրի ամբողջապէս վերագրել կողբացուն:

Մենք նկատել էինք և այժմ կրկնում  
ենք որ գրոււմ քը քաղոււմ ք ինչիւմ Փա-  
ւստոսիք կարող է տալական կնիք ու-  
նենալ այնչափով որչափ Փաւստոս տալական  
կան է: Դործը կողբացու վերագրելու հա-  
մար, պէտք է որ Եզնիկեան կնիք ունե-  
նայ: Խնդիրը պարզ և յստակ է: Հ. Ա.  
գտնոււմ է որ մենք ճնշախնդիր ենք,  
ինչո՞ւ, ղրուվհեան. լիզուի տեսակէտով,

բացատրոււմ է Հ. Ա., զատական նկարա-  
գրին է չափանիշը և ոչ անհատի ոճը:  
Սակայն խնդիրը ճիշդ անհատի, Եզնիկի,  
մասին է և ոչ զատական գրողներին: Եթէ  
Արդեօք Եզնիկ երէցի այս փոքրիկ գրոււմ  
քին վրայ Եզնիկ կողբացոյն անհատական  
կնիքը կը փնտէ, կարող է գտնել նոյնը  
անաշխատ, ամէն բաւ, ամէն նախադա-  
տութիւն Եզնիկեան կնիքով է հոն, որովհե-  
տե զատական ղրոււմ ք է: Տրամաբան  
լինինք: Եզնիկ զատական է, բայց ամէն  
զատական Եզնիկ չէ: Չգիտեմք վէճի նկա-  
թը: Մեր բարեկամն ինքն իրեն յանձնա-  
րարոււմ է որպէս մի անձն որ շըլել է զա-  
տական պարտէզներում, ապրել է ախտիչ,  
անել է իր ճիւղը զատական ճաշակովի,  
այնպէս որ զիտէ զանազանել պարտէզի  
վարդերը, և որպէս մի անձն որ շըլել է զա-  
տական հոտաւէտ, նուազ հոտաւէտ և  
տաւաւն հոտաւէտ: Արդեօք Եզնիկ երէց  
անօրինակ կարողութեամբ ցոյց տայ մեղ Եզ-  
նիկ երէցի գրոււմ քի մէջ այն վարդը որ Եզ-  
նիկեան լինէր, առանց Փաւստոսեան լինելու:

Հ. Ա. փորձում է հանել և ցոյցադրել  
Եզնիկեան ոսկին Փաւստոսիք տաւմ մե-  
տաղի վերայ: Եզնիկի երէց օգտոււմ է  
Փաւստոսին, գրոււմ է Հ. Ա., քաղաւմ հա-  
նաւմ է անել մտքեր, նախադատութիւններ,  
բայց անցուցաւ է զանոնք իր տեսարկին  
մէջ սակի գրչով, Փաւստոսի անփոյթ ոճը  
ոյժ, կերպարանք առաւմ է իր գրչին տակ-  
այստեղ ինքնակաց է Եզնիկ, նոյն ջըղա-  
պինդ, զատական հեղինակը:

Շատ բարի: Ի՞նչ ապացոյցը Անա և  
այն օրինակը որով Հ. Ա. ուզում է լու-  
սաբանել, հիմնի իր պատասխանատու յա-  
տարարութիւնը: Փաւստոս գրոււմ է. «զի  
ի վարս կարգաց զնացից իւրոց նմանեց  
իւրոյ հօրն մեծի Կրիզոստոսի» (Գ. 5). նոյն միտքը  
յայտնոււմ է և մի ուրիշ տեղ. «առաջնոյն  
Կրիզոստոսի՝ հօրն գործոցն նմանեալ» (Գ. 5):  
Եզնիկ երէց փոռ է առել այս տիգի-  
քը: Հ. Ա. բնորոշում է այս, բայց տն-  
ի՞նչ է գրում. «Եզնիկի կը շըլէ իր սքան-  
չելի գրչով այսպէս՝ ղրուվհեան սանն համե-  
մատել(ալ) Կրիզոստոսի ի գործն կարգաց վա-  
րուց զնացից իւրոց»:

Դժուար չէ տեսնել որ Եզնիկ այլ բան  
չէ արել քան ղրիւն Փաւստոսի երկու նա-  
խադատութիւնները: Եւ մեծ երեսակաւու-  
թիւն է հարկաւոր կամ յամառութիւն՝ որա-

կելու այս խզճուկ կուտակեալ նախագաստութիւնը սրպէս «ինքնակաց», «վղապինդ» և նման պինդ մակերեսներով, վերագործել ճշդիկ կողբացուն այսպիսի մի բան, նշանաւորութիւն է ամբաստանել նրան, այն հեղինակին, որի միտքը պայծառ է և խաբէ՞ր՝ զճիտ, հեռու բառական ճոռմ կուտակութեանը:

Պէտք է խոստովանել որ բերած օրինակը շատ անյաջող է և զգալիստարբեր չէ որդարացնում Հ. Ա. Կ. իր կողմէ յանձնաւորութեամբ գասական հոսանքութիւնը: Նոյնչափ ձախորդ են և իր միւս և գրեթէ բոլոր լեզուաբանական արշաւանքները ի նկատման մի մղար բայց յամառ մտքի: Մի տեղի քննելով, սկսելով իր նշանաւոր սրբաբարութիւնից:

Նօսնալիւ: Ինչպէս յիշեցինք, Նօսնալիւ Հ. Ա. սրբագրել է Եկարալիւ: Ի՞նչ իրաւունքով, Որովհետեւ ճշնանագիր, այսպէս եզակի, գործածութիւն չունէր գասականաց լուր, իսկ նշանագիրը կը նշանակէր գիր, տառ: Ուստի հարկ է համարել պարզապէս երկու գրի փոփոխութեամբ նկարագիր տեղւոյն յարմար իմաստ մը տալու համար:

Սակայն նախ պէտք էր ապացուցանել որ գրութեամբ «գասականաց» կարգին է պատկանում և ապա մտածել սրբագրութեան մասին: Երբ մի փոքր գրութեամբ մէջ երկու անգամ պատահում է միևնոյն բառը, ինչպէս նշանագիր, անխնայութիւն է ժխտել նրա հարազատութիւնը:

Հ. Ա. սխալում է, որ նշանագիր եզակի ձևով գոյութիւն չունէր գասականաց լուր: Սխալ է որ նշանագիրը նշանակում է տառ, գիր և ոչ տառեր, գրեր: Սխալ է, որ նշանագիրը միմիայն տառ է նշանակում: Ոչ, մէկէն աւելի նշանակութիւն ունի նշանագիր բառը, ինչպէս պիտի ցոյց տանք:

Հ. Ա. յիշում է Կորիւնից երկու տեղիք ուր կարգացում է նշանագիրը չտալով սրբագրել նշանագիրը, իսկ անտես է արել այն տեղիք ուր սրբագրել չի կարելի, ինչպէս՝ «զնշանագիրն աստուածատուր»: Սրբագրութիւնը միանգամայն անյաջող է և սխալ. նշանագիր քառի յոգնակի սեռականը կը լինի նշանագրաց և ո՛չ նշանագրաց: Դիւրին էր տեսնել իր իսկ թուած վկայութիւններէ մէջ որ ամենուրեք՝ նշանագրաց, նշանագրաւ է: Եթէ

պէտք կայ սրբագրելու, կանոնաւոր ձև է նշանագրաց: Բայց չաճապարինք, քննենք նախապէս Կորիւնի բնագիրը և տեսնենք, ի՞նչ իմաստով և ի՞նչ ձևերով է հոն կիրարկուած մեզ հետաքրքրող նշանագիր բառը, Հարկաւոր ենք համարում բերել բոլոր տեղիքը:

1. «Ի գիրս նշանագրոյ Հայաստան ազգին» (էջ 16):

2. «Սերս յանկարծ ուրիմն նշանագիրս աղփարեոսաց հայերէն լեզուի» (էջ 17):

3. «Նախ ինքն տեղեկանայր ի Դանիէլէ նշանագրոյն» (էջ 17):

4. «Ընկալեալ զնշանագիրսն ի Հաբելէ» (անդ):

5. «Որով զնշանագիրսն մարթասցեն» (անդ):

6. «Նովին նշանագրովք տանէր» (անդ):

7. «Ձեռն բաւական նշանագիրքն» (էջ 18):

8. «Մանաւանդ զի նշանագիրքն թաղեալք» (անդ):

9. «Որում պարգեւէր իսկ զիճակ յամենաշնորհողէն Աստուծոյ... նշանագիրս հայերէն լեզուի» (էջ 19):

10. «Ջամանայն ընտրութիւն նշանագրոյն» (անդ):

11. «Առաջի արկեալ նոցա զնշանագիրն աստուածատուր» (էջ 20):

12. «Առնոյր կարգել նշանագիրս վերացերէն լեզուի» (էջ 25):

13. «Աղուանից առնէր ապա նշանագիրս» (էջ 29):

Հակառակ Հ. Ա., երկրորդ կողմի մէջ, ինչպէս և իննորորդ, «նշանագիրս» յոգնակի հայցական չէ, այլ եզակի ուղղական և զիմորոշ յողով, որպէս նշանագիրս այս: Ուղղական է այն պարզ պատճառով որ երկու դէպքում էլ ենթակայի պաշտօն ունի, ուրիմն չի կարող հայցական լինել: Կորիւնի յատուկ է և յողի նշանագիր գործածութիւնը. հմմ. «որպիսի ասորմար այնպիսի նորդատուր աստուածեղէն շնորհս երեւեցաւ» (էջ 1), այսինքն՝ շնորհս այս. «եպիսկոպոսս տեսուչս եկեղեցոյն Սիւնեաց կարգել որոյ անունն կուէր Անանիաս» (էջ 24): Վեցերորդ կողմի՝ «նովին նշանագրովք կարգաւու է՝ «նովին նշանագրով» (համաձայն նշանագրոյ) (էթէ ոչ նշանագրաւ, նշանագրաւ):

Այսպիսով Կորիւնի մօտ գործածական է նշանագիր բառը եզակի և յոգնակի հասարակաց: Ձեռագրական տուեալները չեն կան որ արտօնէին այս կամ այն սրբա-

գրութիւնն: Բայց ունինք՝ հին վկայութիւն որ երկու ձեւերն էլ օրինակներ են: Որքեանացին օգտուել է կորինւնից և յիշում է ճշնանագիրը հինգ անգամ (Պ. Զ-ԺԳ):

1. «Հայկականացս լեզուաց առնել նշանագիրս»:

2. «Եստեղծ զնշանագիրս մերս»:

3. «Բերեալ զնշանագիր մերոյ լեզուսս»:

4. «Առնէ և նոցա (Վրաց) նշանագիրս (կամ նշանագիր)»:

5. «Եստեղծ զնշանագիրս կոկորդա-խօս... Գարգարացուց լեզուինս»:

Որքեանացու ընթերցուածները իր հերթին կարելի է ստուգել Յովհաննէս կաթողիկոսի քաղուածով որ արուած է Որքեանացուց: 1. «Բերեալ զնշանագիր մերոյ լեզուսս»: 2. «Եստ լեզուի նոցա (Վրաց) արարեալ նշանագիր»: 3. «Եւ նոցա (Աղուանից) ստեղծանէ նշանագիրս (էջ 32)»:

Կաթողիկոսը գիտէ միայն եզակի ձեւը: Այս իրաւունք է տալիս Որքեանացու՝ «Եստեղծ զնշանագիրս մերս հասկանալ թերեւս ոչ յոգնակի, այլ եզակի գնորդ յօղով, ինչպէս կորինւնի օտա. (հմմ. զնշանագիրս իմ). և ամէն պարագային՝ նախընտրել (չորբորգ կոչումի մէջ) նշանագիր ընթերցուածը (փոխան նշանագիրս): Կաղանկատուացին ևս քաղուած է Որքեանացուց. «որ Հայոց և Վրաց ետ նշանագիրս. «Եստեղծ զնշանագիրս կոկորդա-խօս... լեզուին Գարգարացուց» (էջ 218):

Կորինւն Վրաց և Աղուանից համար գործ է ածուած նշանագիրս. Որքեանցին ունի նշանագիրս Աղուանից համար, և այս ընթերցուածը հաստատում է Կաղանկատուացին:

Այս բոլորից հետեւում է որ Որքեանացու ձեռքում եղած կորինւնի ձեռագրում կար նշանագիր՝ եզակի ձեռով: Կորինւնի մեկ հասած ձեռագրում, եթէ անգամ անխնայաբար սրբագրենք բոլոր ընթերցուածները, ամէն պարագային մի ընթերցուածը՝ «զնշանագիրն աստուածատուր» կը մնայ անխախտ, գիմպերելով ամէն մի սրբագրական փորձի:

Ձեռնեք այժմ հարցը զուտ լեզուագիտական տեսակէտից, որպէսզի ըմբռնենք բառի բոլոր նշանակութիւնները: Ի՞նչ է նշանագիրը որպէս բառ:

Նշան, յունարէն σῆμα, լատիներէն signum, հայերէնում, ինչպէս բոլոր լեզուներում նշանակում է նաեւ գիր, տառ, ուրովհետեւ տառը մի նշան է: Աւետարանի ճեմնախնց յայտնի բառը Ոսկերեբանի մեկ նութեան մէջ երևան է գայիս գրախնց ձեւով. (Մեկ. Մատթ. Ա. էջ 243), «Կորինւն՝ մատնանում ծաղկեցուցանել սրբագրելու է՝ մատնանշան համաձայն ձեռագրական ընթերցումի և նշանակում է մատնանագիր»: Ձեռնոր Գլակի գիտէ որ գիր և նշան նոյնա նիշ են, երբ գրում է՝ «գայս գրեցին աւսրի և հեղինացի գրով (և յոյն) և իմաւ յէլացի ճեմնաւ» (էջ 31):

Սակայն ամէն նշան տառ է: Բառիս լայն առումը մատնաորելուն համար կցել են գիր և կաղմել նշանագիր նոր բառը, յրօքս: Առաջ յոյն բառին համապատասխանում էր գիր, որ սակայն գործ էր ածուած յոգնակի ձեռով որպէսզի չլիփթուէ գիրք բառի հետ, այլ միայն եզակի, նշաւ նակելով յրօքս և յրօքսաւ՝ «Եւ էր գիր գրեալ ի վերայ նորա յունարէն և դաղմատերէն և երբայցերէն գրով (Ղուկ. իգ. 38) = «Երբայց յերթանտ անոք յրօքսաւ Այստեղ գիր = յրօքսաւ: Թրակացու քերականութեան մէջ՝ յրօքսաւ ևս թրակացու մանուած է «գիր էս (ա. իմ հրատ. էջ 4): Նոյն իմաստով և Կորինւն գրում է՝ «Ձատաւանագեան ազգին և Հայաստան աշխարհին զաստուածապարգեւ գրոյն» (էջ 1), և ևս թեանցին՝ «պարկականաւն վարէին գրով»: Նշանագիր այն առաւելութիւն ունի որ կաւրելի է արտայայտել ոչ միայն եզակի նշանագիր = գիր, այլ և յոգնակի՝ նշանագիրք:

Հայ լեզուի յատկութիւն է փոխել բարդ բառերում հոլովական հմբ. գործ, գործոյ, գործոց, բայց բարեգործ, բարեգործի, բարեգործաց, գետ, գետոյ, գետոց, բայց միջագետաց: Այսպէս էլ գիր, գրոյ, բայց արձանագիր, արձանագիր, ասց. Հետեւապէս և նշանագիր պիտի հոլովէր նշանագրի, նշանագրաց: Արդ Կորինւն հոլովում է նշանագրոյ, օով, իսկ յոգնակին՝ նշանագրաց (և մ'ը նշանագրոց): Ինչպէս Մենք չենք սիրում շուտափոյթ սրբագրութիւն:

(\*) Անտես են անում Գաղար փարբեցին, որովհետեւ ընագիրը խանգարած է և վատահոլութիւն չէ ներշնչում: «Գաղարը զաղաշնոցս գրեալ շարագիրս տառեցն» (էջ 16) առնուած է իւրեանցացուց (էջ 326): Այս միայն բաւական է որ հարգատ Կաթողիկոսը Մալթոցի վերաբերելու հատուածը: Մեր անցած յօդուածում (Սյուն, Թ. 6) մի անախորժ տպագրական լրիպակ է շատր Ժեռք փոխանակ շատր Ժեռք: Նոյնպէս «թուղթէ» կարգալու «թող Թէ»:

ներ, այլ միշտ աշխատում ենք հասկանալ, մեկնել այն ինչ որ թուում է օտարոտի և արտաքոյ որոշ կանոնի: «Աստուածապարզ և զիտն նոյնն է ինչ որ ճանաչողիմ աստուածածնի»», այսինքն նշանագիր չի նշանակում մի տառ, այլ եզակի ձևում պահում է նոյն հասկանալի իմաստն ինչ որ ունի գիր: Ուստի և հոլովում է որպէս գիր, եզակի թուում, բայց յոգնակի՝ նշանագիրք հետեւում է ընդհանուր օրէնքին. նշանագիր նշանակում է նաև նշանագրող: Նշան է գիր, նշանագիր = գրագիր: Այս իմաստով կիրարկուած է քանիցս անգամ Ագաթանգեղոսի մօտ. 1. «զրպեցան անդ նշանագիրք որ գրեցին զամենայն բանս» (էջ 97): 2. «գրեցին ատենակալ զպիրքն նշանագրացն» (էջ 60): 3. «Ոյ կարի ինչ անտեղեակ լիալ ձեռնարկութեան նշանագրացըն» (էջ 9): 4. «կարգել ինձ ի ձեռնարկութեան նշանագիր ժամանակագրացն» (էջ 10): 5. «և հրամայեցին նշանագրի միում որ եկեալ էր ի Յոււսաց» (Յովհ. Մամիկոնեան, էջ 16):

Հ. Ա. սոր առ ձոր է ընկնում բացաւորելու այս վկայութիւնները, միշտ կառած այն մոլար մտքին թէ նշանագիրք այստեղ ևս նշանակում է տառ: Մինչդեռ առաջին և վերջին վկայութիւնները կասկածի տեղ չեն թողնում որ նշանագիր ունի նշանագրողի իմաստ: Երկրորդ վկայութիւնը ևս նոյնն է հաստատում. «զպիրք նշանագրաց» հասկանալու համար պէտք է վերջիւ Փաւստոսի խօսքը. «և գրեցին զայս սեմիարգ նոտարացի» (այս. Նոտարացի) արքային» (էջ 118): Սեմիարք նոյնն է ինչ որ Սեմագիրք Եւսեբիոս կենսարացու (Եվ. Պատմ. էջ 468): Սեմագիր, օղա «նշան» և գիր բառերից կազմուած զուգակառու է նշանագիր: Սեմար = օղա, —αἶμας ածանցով, համարում է սեմարին: Հինգերորդ վրկայութիւնը, որ այնքան ջինջ է, Հ. Ա. մոռացութեան է տուել անարդարաբար: Երրորդ վկայութիւնը լուսարանում է չորրորդով. ձեռնարկութիւն նշանագրաց = ձեռնարկութիւն ճանաչողի ժամանակագրաց, որ ժամանակագիրք է ժամանակագրողը: Հնարաւոր է նաև «նշանագրաց» և «սամանակագրաց» հանկանալ որպէս նշանագրութեանց և ժամանակագրութեանց իմաստով, եթէ համեմատելու լինենք «նշանակիր ժամանակագրաց» Ագաթանգեղոսի՝ «պատմա-

գիր մատենից»ի հետ. «մատենի ի պատմա-գիր մատենից» խորութիւն» (էջ 9):

Նշանագիր ունի արգարև և մի երրորդ նշանակութիւն, որպէս նշանագրութիւն, գիր, թուղթ, գրուածք: Եւ այս է վէճի բուն առարկան:

Ոսկերեքան գրում է. «պարտ և պատշաճ էր մեզ ոչ կարօտանալ ի նշանագիրս գրիլոցն օգնականութեան» (Մեկ. Մատթ. Ա. էջ 1): Զարմանալի է որ Հ. Ա. չի նշանակաւոր որ այստեղ նշանագիրք չէ նշանակում տառ և չի կարող նշանակել: Բերում է յոյն բնագիրը. τῶς ἀπὸ τῶν γραμματέων βουλευίας, բայց անօգուտ, իմաստը չի հասկացել: Γράματα հոս չի նշանակում տառ, այլ գրուածք, գիրք: Յոյն բառը երկու նշանակութիւն ունի, տառ և զպրութիւն, գիրք, ինչպէս և լատին litterae, յոյնի հետեւութեամբ, և Փրանս. lettres լատիներէնից ժառանգած:

Եթէ չզհանար միայն բառաքաղով, այլ աչք ածել բնագիրը, այս կուլտ սխալը չէր գործել: «Պարտ և պատշաճ էր մեզ ոչ կարօտանալ ի նշանագիրս գրեւոր օգնականութեան, այլ այնպէս սրբական գրար ընծայեցուցանել որպէնզի շնորհք հոգւոյն փոխանակ ընդ գրոց լինէին միոց հոգւոց ի պաշտպանութիւն և զոր օրինակ զգրեալսն մեղանաւ, նոյնպէս և զմեր սիրտս սուրբ հոգւոյն գրել»:

«Պրոց» և «զգրեալս» նոյնանիշ է նշանագիրք-ի: Հայ թարգմանը շատ ճիշտ է արտայայտել յոյն ἀπὸ τῶν γραμματέων = «ի նշանագիրս գրեւորաց», ուր գրիլոց տաւ լիւ է ἀπὸ-ի իմաստը: Յոյնը չէ ասում տօն յղաքաւոր βουλευία, օգնականութիւն նշանագրաց, այլ տօն ἀπὸ γραμματέων βουλευία, օգնականութիւն ի կողմանէ նշանագրաց, կամ գրեւոր (որ ինչ գրեալ է) ի նշանագիրս:

Նոյն թիւրիմացութիւնը տեսնում ենք և միւս վկայութեան նկատմամբ, քաղած Իգնատիոսի թղթերից. «զոր ի ձեռն ստիկա նշանագրաց խնդրեմ ի ձէնը» = «ձեռն յղաքաւոր, նշանագիրք հոս ևս թուղթ, գրութիւն է նշանակում և ոչ տառ»:

Հ. Ա. իբրւում է մի վերջին վկայութիւն, քաղելով Հ. Բառգրքից. «Եւ նշանագրաւ»՝ ձեռամբ ասէ գրել զողջոյն. Ոսկ. Բ. Թիւս. և անյապաղ սրբագրում. «այլ թէ զողջոյն իմով ձեռամբ գրեմ», որպէս թէ «համաձայն յուշարէնի և էջմի-

ածնի և Քենդրամիտ ձևազարկներին, Բայց և այնպես սրբազրույթիւնն անտուգի է:

Ոսկերեքանի խօսքը մեկնութիւն է Բ. Թիս. վերջին տան՝ Բաւական էր կարգաւ այդ տունը որ խուսափէր կամայական սրբազրույթիւնից: Ահա այդ տունը. «Ողջոյն» իմոյ ձեռին Պաւղոսի է, որ է նեւմակ յաւմենայն թուղթս, այնպէս գրեմ. Հնորք տեառն մերոյ Սիուսի Բրիստոսի ընդ աւմենսին ձեռոյ:

Բերենք Սփրմի մեկնութիւնը. «Աւքանդի գրեցին Նոքա թուղթս յանուն իմ և ընթերցան առաջի ձեր, զողջոյն զայս ձեռին իմոյ Պաւղոսի գրեալ է. և ամենայն թղթոց իմոց զայս նշանակ դնեմ եւ: Եւ արգայտահետեւ զամենայն թուղթս զոր բերեն առ ձեզ, և այս նշանակ չիցէ ի նոսա, աւելորդք և անպէտք համարեալ լիցին ձեզ» (Գ. էջ 192—193): Էոյսի պէս պարզ է:

Առաքեալը զգուշացնում է կեղծիքներինց ասելով որ իր ողջունազիրը թող լինի նշանակ տրւում որ թուղթը հարազատ է: Ոսկերեքանի մեկնութեան հէջ նշանազիր բացատրում է յաջորդ ձեռամբ Բաւական. փոխանակ ձեռնակորի գործ է ամուսմի բառ նշանազիր, որ է գիր, ձեռագիր որպէս նշանկամ նշանակ. հետեւաբար այս բառը կապ չունի մեզ զբաղեցնող նշանազրի հետ:

Այս մանրակրկիտ քննութիւնից յետոյ դառնաք Եզրիկ երէցի նեւմակին, վէճի բուն առարկային:

Մենք ասել էինք որ նեւմակի գրքըւածք իմաստով դասական չէ. և ուրեմն դասական հեղինակի գրչէն ելած չէ կարող լինել: Հ. Ա. ասելցնում է որ բառի այս իմաստը ճշմարիտ ոչ-դասական չէ: Ուրեմն բառը գոյութիւն չունի՞ր բնաւ:

Մեր կարծիքի հիմը պարզ էր. նըշանազիրք իբրեւ գրուածք յունարանութիւն է, ինչպէս բացատրեցինք, և հետեւապէս դասականները որ իրենք էին այդ նորարանութեան հեղինակները, մանաւանդ Եզրիկ կողմացին, եթէ նա է Ոսկերեքանի հաւանական թարգմանիչը, ինչպէս կարծում է Հ. Ա., չէին կարող գործածել նշանազիր նոյն իմաստով:

Այլ է հետնորդներին վերտերբումը: Բառի ծագումը մոռացուել է: Սովորական երեւոյթ է: Հետագայում նշանազիրք հնչում է հայ ականջին (նման բազմաթիւ նոյնա-

կազմ բառերի, արձանազիր, ստուերազիր, նկարազիր, մատենազիր, ճակատազիր, ախարհազիր և այլն իրենց յոգնակի ձեւերով) իբրեւ նշանազիր, նշանազիրք: Մովսէս Կալանկատուացին գրում է. «Վճի սքանչելի պատմութեանս, զոր հանգրծեալ եմ հընչեցուցանել... որում ոչ համեմատ է մէջ դարուցն առաջնոց նեւմակիքի ազգի ազգի պատերազմաց և խռովութեանց» (էջ 230): Ընդգծուած բառը գիտէ մեր պատմազիրը Ազաթանգեղոսից, բայց չենք կարծում որ նա գիտեմար բառի ծագումը: Նրա համար նշանազիրք յոգնակի ձեւն է նշանազիր-ի: Ուրիշ օրինակ: «Իսկ ժամանակ ժողովոյն որպէս ի նեւմակիքսն գտաք ի հիւպատոսութեան Պաւղոսի և Յուլիանոսի» (Սովորատ, Եկ. Պատ. էջ 38): Այստեղ ի նեւմակիքս թարգմանութիւն է բնազրի եւ թարգմանաւոր, հայ թարգմանի գիտէ այս բառը, բայց դժուար թէ դադափար ունենար նրա ծագման և յրաբարտ-ի հետ ունեցած աւելի մասին: Յոգնակի ձեւը համապատասխանում է յունականին որ ևս յոգնակի է: Յոյն եղակին՝ թարգմանաւոր կը թարգմանէր անտարակոյս նեւմակիք: Եղիշէն տառն է. «Եւ նշանազրեցի յայսմ եօթն յեղանակիս» = (Կապ չունի Ազաթ. նշանազրեւոր հետ, «անցուցանէ զժողովուրդն յայնպէս զոր եւ նեւմակիքսն վայելեցուցանէ» էջ 159): Այս բայը ենթադրում է նեւմակիք բառի գոյութիւնը (ինչպէս արձանազրի՝ արձանազիր, և այլն). ասել է թէ Եղիշէն ծանօթ էր նշանազիր բառը: Իսկ Եղիշէն յետ դասական է, բայց Հ. Ա., մինչև անգամ է. գարու հեղինակ:

Ի՞նչ գարմանք, եթէ նոյն գործածութիւն գտնուի եւ Եղիշի երէցի մօտ: Եզրիկ երէց գիտէ նշանազիր բառը Ազաթանգեղոսից, Կորիւնից և նրանց հետեւիով գործ է նմում կրկնակի իմաստով՝ գրութիւն և գիր = տառ: Վերնագրում Եզրիկ երէց իր գործը անուանում է նշանազիր, իսկ վերջը, յիշատակարանում՝ գիր. «Եի թարգմանել զգիրս զայս» Հ. Ա. պատրաստ է սըրբազրի՝ «Եի թարգմանել գրոցս այսոցիկն» ի զուր, գէթ յիշէր Փարբեցու պատմութեան սկիզբը՝ «Եի ի բաժանելն զթագաւորութիւն Արշակունւոյն» կամ Ազաթանգեղոսի՝ «Եի սպանանել զնա Արաաւրի»: Ամէն պարագային՝ «գրոցս այսորիկ և ոչ «գրոցս

այսոցիկ»։ զգիրս զայս յողնակի հայցական չէ, այլ եղակի դիմորոշ յօղով՝ գիրս Այս գիրը նոյնն է ինչ որ Նշանագիրը։

Եզնիկ երէց երկրորդ անգամ կիրարկում է Նշանագիր տառ = գիր իմաստով։ Հ. Ա. «տարտամ» է գտնում այս իմաստը։ Կորիւն տոռւմ է՝ «Նշանագիրս արփաբետաց հայերէն լեզուի», Եզնիկ՝ «Նշանագիր դպրութեան հայերէն լեզուի վարիւոյ արփաբետաց հանգամանա»։

Այսպէս որ կողմէն որ մօտենանք նշանագիր բառին, բանասիրական թէ լեզուագիտական, հիմ չենք գտնում կասկածելու նրա հարազատութիւնը։

Նկարագիր. Սակալ չ. Ա. չի վարանում ջնջելու Նշանագիրը և տեղը դնելու նկարագիրը և կարծում է որ Վարդան գրիչը որ 1254 թուին ընդօրինակել է մեր ձեռագիրը չի հասկացել նկարագիր բառի իմաստը և փոխարինել է Նշանագիրով։ Նկարագիր սովորական բառ է, մինչդեռ Նշանագիր ըստ Հ. Ա., գոյութիւն չունի ոչ դասական և ոչ յետ-դասական գրականութեան մէջ։ Ուրիմն միտեղից է գտել խեղճ Վարդանը։ Պէտք է խոստովանի որ այս եմթարութիւնը մեռելով ծնունդ է։

Հ. Ա. հռչակում է որ «նկարագիր դասական առումով կը Նշանակէ պատմութիւն, գրութիւն»։ Բերում է երկու վկայութիւն Ոսկերեքանի մեկնութիւններից, և երկու ուրիշ՝ յետ-դասական հեղինակներից։ Այս ըմբռնումը ևս սխալ է և ձգտում է կոշտանքի թիւր հասկացողութիւնից։

Ս. Գիրքը, դասական լեզուի մայրը, չգիտէ բառիս Ակինեանական Նշանակութիւնը։ Յիշուում է երկու անգամ՝ «նկարագիր տան» = διαγραφῆς (Եզեկ. խգ. 11), և «նկարագիր էութեան» = χαρακτήρ τῆς ὑποστάσεως (Իբր. Ա. 3)։ Այս վերջին իմաստով է որ գոչում է Ոսկերեքան. «գիւրդ կարացից զքեզ ընդ մարդկան հաշուել, յորժամ ոչ տեսնիցեմ ի քեզ նկարագիրս այսպիսի բնութեան (Մատթ. Ա. էջ 57) = τῆς ταύτης φύσεως τοῦ χαρακτήρος (Migne, p. 57, col. 49)։ Առաջին իմաստը Ագաթանգեղոսի մօտ «նշանագիր» Զօրիսիմէի (էջ 79), Սեբրիա-նոսի՝ «նկարագիր մարմնոյն» (էջ 116) և այլ։

Մի երրորդ Նշանակութեամբ գործ է ածւում Ս. Գրքի նախադրութիւնների և Ոսկերեքան մեկնութիւնների մէջ. «նշակա-

րագրան ի գործասիրութիւն զարթուցանէ զյոյւն» (Նախ. Առակաց ԺԵ), «Տեսիլ գաւ զանացն ըստ նկարագրին... զտիրելն Աստուծոյ յայտնէ» (Նխ. Եզեկ. ա), «Նկարագրան զհարուածս Եղովմայ յետ զարձին»։ զհամբառնալն Քրիստոսի մարգարէանայն (Նխ. Սոսայ. խէ)։

Այստեղ նկարագիր է կոչուած Ս. Գրքի բնագրի կտորները, ընթերցուածները։ Այսպէս է կոչուած Ոսկերեքանի մօտ Ս. Գրքի այն տները որ իր մեկնութեան նիւթ են։ Սօսյի մարգարէի Ս. Գլխի առաջին տները՝ «Մխթարեցէք, մխթարեցէք զբողոքողոքս իմ...» և յատկապէս՝ «ամինայն ձորք լցցին» և ամինայն լերինք խոնարհեցցին տունը մեկնելուց յետոյ, ասում է՝ «ես տեսնեմք ըստ նկարագրին» (Մեկ. Ես. 248)։ Մատթէոսի «հրաման տուր մեզ երթալ յերամակ խոզիցն» տան առթիւ քանի մի բացատրութիւն է տալիս, յետոյ աւելացնում. «ես եթէ այլ ոք ինչ երեսս կամիցի առնուլ, նմա չէ արգելլ։ Բայց նկարագիրս զայս յայտ առնէ. պարտ է զիտել ստոյգ թէ մարդք խողացեալք զիւրաւ ըմբռնին ընդ զիւրաց իշխանութեամբ» (Մատթ. էջ 443) = «ei δὲ τις καὶ κατὰ ἀναγνώσιν ταῦτα ἐκλάβει, τὸ καλῶς οὐ σὺδεν. Ἦ μὲν γὰρ ἱστορία αὐτή. (Migne, p. 57, col. 355)։

Հ. Բառգիրքը բիրում է նաև Ոսկերեքանից մի ուրիշ վկայութիւն առնուած Գաղատացոց թղթի տակաւին «անտիպ մեկնութիւնից. «նկարագիրն ոչ միայն զայն գուշակ է որ երևինք, այլ» և այլ ինչ բազում»։ Գտանք յոյն բնագրի համապատասխան տեղը. «ἡ μὲν ἱστορία αὐτῇ οὐ τοῦτο μόνον παραδιδόσκει ὅπερ φαίνεται, ἀλλὰ καὶ ἄλλα τινὰ ἀναγορεύει διὰ καὶ ἀλληγορίας κέλονται (Migne, p. 61, col. 662)։

Հայ թարգմանութեան՝ նկարագիրը, ուրեմն, համապատասխանում է յոյն ἱστορία αὐτῇ. Սօսյի մեկնութեան յոյն բնագիրը յայտնի է, բայց հաւանութեան այնտեղ ևս ἱστορία αὐτῇ է։

Ահա այստեղից Հ. Ա. հանել որ նկարագիր Նշանակում է «դասական առումով պատմութիւն, գրութիւն»։ Այստեղ է ևս գայթակղութեան քարը։

Հ. Ա. չգիտէ որ ἡ ἱστορία կամ ἡ ἱστορία αὐτῇ. յատուկ Նշանակութիւն ունի հին մեկնաբանական գրականութեան մէջ, ընդդեմ-

ուսած եզր է, մի տեսակ terminus technicus, որով կոչւում են Ս. Գրքի բնագրից առած վկայութիւնները, տուն թէ տներ մանաւանդ, երբ ուզում են շնչով նրանց բառական իմաստը ի հակադրութիւն այլաբանականի, որ առուում է ձայնային կամ օձկոյորէ ալլաբանութիւն: Ամենայն ձորք 1939ին և ամենայն լերինք խոնարհեցին», այս օտորիա է, այսինքն նշանակում է՝ ձորեր կը 129-ցուին և լեռները կը խոնարհին: Եւ ուրիշ ոչինչ: Բայց նոյն խօսքը կարելի է հասկանալ նալ նալ ալլապէս, այն է՝ որ հրեաները պիտի վերադառնան գերութիւնից առանց արգելքի, և կամ Գրիստոսի տնօրինութեամբ ճանապարհները կարթւում են նոր կենքի համար: Այս արդէն օտորիա չէ, այլ ձայնային:

Հայ թարգմանը գովեստի արժանի է որ ըմբռնել է բառիս մասնաւոր երանգը և թարգմանել նկարագիր, մինչդեռ այլուր ուր նոյն բառը նշանակում է իսկապէս պատմութիւն՝ այդպէս էլ թարգմանել է. օր. և երանելի կենացն նոցա պատմութիւն» (Մեկ. Մատթ. էջ 58) = καὶ τῆς μακαρίας ζωῆς αὐτῶν ἱστορία (Migne, p. 57, col. 355). Նոյնպէս պատմութիւն է թարգմանած (Մեկ. Մատթ. էջ 440) = δούγησης (Migne, p. 57, col. 352):

Հ. Բառգրքը շատ ուղիղ է բացատրել բառին նշանակութիւնը, գնեով գէմը օտորիա αὐτῆς մեկնելով՝ քուն պատմութիւն, գրութիւն, ճառ սուրբ գրոց, բնագիր» (իմա՝ սուրբ գրոց):

Հ. Ա. քաղել է իր տեղեկութիւնները Հ. Բառգրքից, բայց անտեսել է այնտեղ տուած բացատրութիւնը, պատմութիւն, գրութիւն սուրբ գրոցը արտագրելով պատմութիւն, գրութիւն, իսկ յոյն բառը հասկացել է սովորական իմաստով: Եթէ Հ. Ա. նեղութիւն քաշէր գէթ ստուգելու Հ. Բառգրքի կոչուները, անշուշտ չէր շեղուի ճշմարտութեան ճանապարհից:

Ձի ստուգել նաև Եւսեբիոս Կեսարացու մի վկայութիւնը, բաւականացել է արտագրել Հ. Բառգրքից, առանց փոյթ ունենալու ըմբռնել թէ ի՞նչ է նշանակում վկայութիւնը: Հ. Բառգրքը բերում է և այս տեղիքը. «բանք նկարագիրը որպէս և անդ ասացեալ է՝ գրեաց նա» (Եւս. Եկ. Պատմ. գ. 8) Հ. Ա. արտագրել է նոյնու-թեամբ, աւելացնելով, էջ 110: Եւսեբի էլ

110 ահա ի՞նչ է գրած. «Եւ իբրեւ ընթեռնուն զգիրս սուրբա, իմաստանան հայրենի իմաստութեամբն, և միկնեն զառակս որ գրոյմեալ են ի նոսա. զի բանք որ ասացեալ են՝ ցկարագիր խորհուրդք առական համարին թէ գրոյմեալ է ի նոսա»:

Վստահ ենք որ Հ. Ա. չի ըմբռնել այս տեղեքը, եթէ ոչ անխոհմութիւն չէր ունենար սակեւ թէ նկարագիր նշանակում է այստեղ պատմութիւն, գրութիւն:

Եւսեբիոս, քանի մի տող յետոյ, գրում է. «զի օրէնք ամենայն թաւին մարդկան այնմիկ եթէ նման են մարդոյ, և բանք որ ասացեալ են՝ ցկարագիր համեմատեալ կռնեն զնոսա ի մարմին(ս), իսկ զլուսնչ՝ զժամուկ իմաստութիւնն որ թաղեալ է ի նոսա» (էջ 113):

Եւսեբիոս պատմում է, Փիլոն Երբայեցու վկայութեամբ, թէ Հռոմէի հերէական համայնք կար ուր Ս. Գրքը կարգում էին և մեկնում, ըստ հայրենի սովորութեան, այլաբանօրէն: Թէ ի՞նչ է նշանակում ընդգծած «բանք» որ ասացեալ են՝ նկարագիր, կը պարզէ յոյն բնագիրը. «πει δὴ σύμβολα καὶ τῆς ἱστορίας ἐρμηνείας νομίζουσιν ἀποκαχυμμένης φύσεως ἐν ὑποκρίσει δηλοῦμένη (Migne, p. 20, col. 177).

Միւս տեղիքը. καὶ σῶμα μὲν ἔχειν τὰς βράτας λέξεις, ψυχὴν δὲ τὸν ἐν ἀποκαλύπτει τὰς λέξεσι αὐτῶν νοῦν (նոյնը, col. 181):

Արդ՝ ἡ ἱστορία ἐρμηνεία, քանի ասացեալ, և αἱ βράται λέξεις, քանք ասացեալք» նշանակում է այն ինչ որ օտորիա αὐτῆς, և յայտնի է մանաւանդ τὸ ῥητόν կարճ ձևով: Հայ աւելացրել է նկարագիր բացատրելու համար քանք որ ասացեալ են, որ այլ իմաստ չունի, հետեւապէս, քան Ս. Գրքի ընթերցուածք, տեղիք, թարգմանի՞նչ է աւելացրել նկարագիրը թէ մի բանիմաց մեկնելի լուսանցարութեամբ, այդ կարեւոր չէ: Վկայութիւնն իմաստն այժմ պարզ է, Հռոմովի հրէական համայնքը անարում էր Ս. Գրքի բնագիրը մի տեսակ սեմբոլներ օրենք մէջ թագնուած իմաստը երեւած է գալիս ալլաբանական մեկնութեամբ, կամ, ինչպէս տուել էին հնեքը, առակով, այլաբանութիւն բառը տակաւին ծանօթ չլինելով: Նրանց աչքում Ս. Գրքի ընթերցուածները նման են մի կենդանի էակի, մի մարդու, որի մարմինն են ընթերցուածները իրենց բառական իմաստով, իսկ հոգին՝ այն տեղ թաղուած անտեսանելի միտքը: Այսպէս ուրեմն նկարագիր չի նշանակում Եւսեբիոսի մօտ պատմութիւն, գրութիւն:

ՊՐՈԳ. Ն. ԱՆՈՆՏ